ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2024 թ.

«Ուղղակի ժողովրդավարություն»
ժողովրդական ինստիտուտների ամրապնդման
ՀԿ-ի աշխատակից
Գևորգ Քոթանջյանին
Հասցեն՝ ք. Վանաձոր, 2001
Տիգրան Մեծի 47/13-1,
էլ. փոստ՝ directdemocracy451@gmail.com :
Հեռ.՝37477343745

Հարգելի պարոն Քոթանջյան

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից իրականացվող և ֆինանսավորվող ծրագրերը հիմնականում ընթացիկ ծախսեր են, որոնք ուղղված են ուսումնական հաստատությունների պահպանմանը: Ծրագրերին և ֆինանսավորման չափերին կարող եք ծանոթանալ ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի որոշման հավելվածներում, այն ավելի մանրամասն արտացոլված է թիվ 4 հավելվածում, որտեղ նշված են ծրագրերի և միջոցառման անվանումները, գումարների չափերը՝ ըստ մարզերի և եռամսյակային բաշխումների: Նշված գումարները այս պահին ճշտման փուլում են և որոշ ծրագրերի գումարներ ենթակա են փոփոխման: Կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն կարող ենք տրամադրել տարեկան արդյունքները ամփոփելուց հետո:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ՀՀ Լոռու մարզային ենթակայության թվով 69 հանրակրթական դպրոցի տրամադրվել է ֆիզիկա, քիմիա/կենսաբանության, աշխարհագրության, համակարգչային լաբորատոր գույք և սարքավորումներ, մի շարք դպրոցներում իրականացվում են վերանորոգման աշխատանքներ: Նշված աշխատանքները նույնպես ընթացքի մեջ են և դեռևս չեն ավարտվել:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից թվով 5 դպրոցներում տեղադրվել են 25-50 կվտ հզորության արևային կայաններ:

X _____

Հարգանքով՝ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

կատ. Ա. Բեջանյան
հեռ. /0322/ 4 34 99 055 72 01 67